



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ ընդհանուր իրավասության  
առաջին աստիճանի դատարանի վճիռ  
Վարչական գործ N 0089/05/11թ.  
Նախագահող դատավոր՝ Ա.Ամիրջանյան

Վարչական գործ N 0089/05/11թ.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

15-ին նոյեմբերի 2011թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը /այսուհետ՝ Գերագույն դատարան/ վճռաբեկության կարգով՝

Նախագահությամբ՝ դատավոր  
Դատավորներ՝

Գ.Գրիգորյանի  
Ի.Կարապետյանի  
Շ.Օհանյանի

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Ալեքսանդր Քոչարի Սաֆարյանի ընդդեմ ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության և ԼՂՀ Մարտունու շրջանի Ղուզե Ճարտարի համայնքապետարանի՝ վկայագիրը և արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին վարչական գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2011թ. սեպտեմբերի 16-ի վճռի դեմ երրորդ անձ Դավիթ Զոհրաբի Դավթյանի վճռաբեկ բողոքը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1.Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ հայցվոր Ա.Սաֆարյանը խնդրել է անվավեր ճանաչել Դ.Դավթյանի անվամբ տրված S-70 Վ մակնիշի թրթուրավոր տրակտորի տեխնիկական վկայագիրը, պատճառաբանելով, որ Ղուզե Ճարտարի գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունը /ԳԿՏ/ 2001թ. լուծարվելու արդյունքում որոշում է ընդունվել գյուղատնտեսական տեխնիկական որոշակի բալերի դիմաց հանձնել բալերը հավաքած անձանց: ԳԿՏ-ի S-70 Վ մակնիշի թրթուրավոր տրակտորը շահագործում էր մեխանիզատոր Դ.Դավթյանը: Նկատի ունենալով, որ Դ.Դավթյանն ինքնուրույն չի կարողացել հավաքել տրակտորի ձեռք բերման համար անհրաժեշտ բալերը, ինքը վճարել է և ձեռք բերել նշված տրակտորը: Սակայն հետագայում իմացել է, որ Դ.Դավթյանը՝ առանց իրեն իրազեկելու, իր անվամբ տրակտորի նկատմամբ վերցրել է տեխնիկական վկայագիր:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ՝ Վարչական դատարան/ 2011թ. սեպտեմբերի 16-ի վճռով հայցվոր Ալեքսանդր Քոչարի Սաֆարյանի հայցն ընդդեմ ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության և ԼՂՀ Մարտունու շրջանի Ղուզե ճարտարի համայնքապետարանի բավարարվել է. Դավիթ Ջոհրաբի Դավթյանի անվամբ 26.12.2009թ. /իրականում՝ 26.11.2009թ./ տրված S-70 Վ մակնիշի թրթուրավոր տրակտորի Կ N001180 տեխնիկական վկայագիրը ճանաչվել է անվավեր:

Նշված վճռի դեմ երրորդ անձ Դ.Դավթյանը բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վարչական դատարանը խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածը, 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 24-րդ հոդվածը:

Նշված պնդումը բողոք բերած անձը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

Բողոքաբերի կարծիքով՝ Վարչական դատարանը չի պարզել, թե հայցվորի որ իրավունքներն են խախտվել իր անվամբ տրված վկայագրով: Դատարանն անհիմն է բավարարել հայցվորի միջնորդությունը՝ վարչական ակտի բողոքարկման 2բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին: Դատարանը բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ չի հետազոտել գործով ապացույցները, և չի պարզել, թե ովքեր էին հանդիսանում ԳԿՏ-ի փայտտերերը, թե համայնքը որևէ կապ ուներ ԳԿՏ-ի հետ և արդյոք իրավասու էր օտարել նշված գույքը, իսկ եթե իրավասու չէր, ապա որ մարմինը կարող էր այն օտարել:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վարչական դատարանի վճիռը և հայցը մերժել:

## **3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1/ Հայցվոր Ա.Սաֆարյանը և երրորդ անձ Դ.Դավթյանը հանդիսանում էին Մարտունու շրջանի Ղուզե ճարտար գյուղի ԳԿՏ-ի փայտտերեր:

2/ Վիճելի S -70Վ տրակտորը պատկանում էր նշված ԳԿՏ –ին:

3/ ԳԿՏ-ն լուծարվել է 2001 թվականին:

4/ 26.11.2009թ. Կ N 001180 տեխնիկական վկայագրի համաձայն՝ վիճելի տրակտորի տերն է հանդիսանում Դավիթ Ջոհրաբի Դավթյանը:

5/ Հայցվորը, վիճարկելով նշված վկայագիրը, պատճառաբանել է, որ այն տրվել է առանց օրինական հիմքի: Իրականում տրակտորը պատկանում է իրեն, քանի որ տրակտորի դիմաց ինքն է վճարել:

6/ Վիճելի տրակտորն իրեն պատկանելու վերաբերյալ հայցվորը դատարանին որևէ ապացույց չի ներկայացրել:

## **4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ բողոքի հիմքերի սահմաններում վերանայելով Վարչական դատարանի վճիռը, Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, իսկ դատարանի վճիռը՝ բեկանման, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

Համաձայն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի՝ յուրաքանչյուր Ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված

կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Համաձայն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝ 1) գնահատում է ապացույցները. 2) որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել. 3) որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը. 4) որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու հարցը:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ որպեսզի գործով օրինական և հիմնավորված վճիռ կայացվի, դատաքննությամբ պետք է ապացուցվի վիճարկվող վարչական ակտն օրենքին հակասելը և դիմողի՝ Սահմանադրությամբ, օրենքներով երաշխավորված իրավունքների խախտման փաստի առկայությունը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վարչական գործերով օրենսդիրը ապացույցներ ներկայացնելու և ապացուցման պարտականությունը կողմերի միջև բաշխելու հետևյալ կանոններ է ամրագրել. ապացուցման պարտականությունը դրվում է գործողությունը (անգործությունը) թույլ տված կամ որոշում կայացրած մարմնի կամ պաշտոնատար անձի վրա, սակայն հայցվորը, ինչպես որ բոլոր գործերով, պարտավոր է ապացուցել իր իրավունքները խախտված լինելու հանգամանքը (ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 3-րդ և 2-րդ մասերը):

Նշվածից հետևում է, որ անձն իր իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանություն կարող է հայցել միայն այն դեպքում, եթե ապացուցվում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտվել կամ կարող են խախտվել նրա իրավունքները կամ օրինական շահերը:

Մինչդեռ, սույն գործով չի պարզվել, թե երրորդ անձ Դ.Դավթյանի անվամբ տրված S-70 Վ մակնիշի թրթուրավոր տրակտորի տեխնիկական վկայագրով հայցվորի՝ ԼՂՀ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված որ իրավունքներն են խախտվել:

Ինչպես հետևում է գործի նյութերից, վիճելի գյուղտեխնիկական մինչև Ղուզե Ճարտարի ԳԿՏ-ի լուծարումը և լուծարումից հետո շահագործվում էր Դ.Դավթյանի կողմից:

«Գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի համաձայն՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում շահագործվող

գործարանային արտադրության կամ ինքնաշեն գյուղատնտեսական տեխնիկան ենթակա է պարտադիր պետական հաշվառման: Առանց տեխնիկական վկայագրի, պետական համարանիշի... գյուղատնտեսական տեխնիկայի շահագործումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

ԼՂՀ Կառավարության 23.05.2006թ. N 283 որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսական տեխնիկայի պետական հաշվառման» կարգի 5-րդ կետի համաձայն՝ գյուղատնտեսական տեխնիկայի հաշվառման համար սեփականատերը գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության համապատասխան տարածքային տեսուչին ներկայացնում է գյուղատնտեսական տեխնիկայի սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ: Կարգի նույն կետը սահմանում է նաև, որ «նշված փաստաթղթերն են՝ գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարեցման վերաբերյալ սահմանված կարգով կնքված պայմանագրերը, հաշիվ-ապրանքագրերը..., դատական ակտերը..., Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իրավունքը հաստատող այլ փաստաթղթեր»:

Գործով հաստատված փաստերի համաձայն՝ 3-րդ անձ Դ.Դավթյանը, ներկայացնելով հաշիվ-ապրանքագրերը, Ղուզե Ճարտարի գյուղապետարանի տեղեկանքը, գյուղատնտեսական տեխնիկայի հաշվառման համար օրենքով նախատեսված պետական տուրքերի վճարման անդորրագրերը, վիճելի գյուղտեխնիկայի նկատմամբ ստացել է տեխնիկական վկայագիր: Գերագույն դատարանն արձանագրում է, որ վիճելի տեխնիկան իրեն պատկանելու վերաբերյալ հայցվոր Ա.Սաֆարյանն օրենքով նախատեսված կարգով որևէ ապացույց դատարանին չի ներկայացրել, հետևաբար, Վարչական դատարանը վիճարկվող տրակտորի տեխնիկական վկայագիրը անվավեր է ճանաչել անհիմն:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի նշված հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի ուժով Վարչական դատարանի սույն գործով կայացրած վճիռը բեկանելու, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված լիազորությունը կիրառելու և հայցը մերժելու համար, քանի որ ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Երրորդ անձ Դավիթ Զոհրաբի Դավթյանի վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստյանի դատարանի 2011թ. սեպտեմբերի 16-ի վճիռը և այն փոփոխել: Ալեքսանդր Քոչարի Սաֆարյանի հայցը մերժել:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Դատավորներ՝

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Շ. ՕՉԱՆՅԱՆ